

ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ «ԿԱՆԹԵՂԸ»

Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Միաբանության ջանքերով հրատարակուող կրօնական գիտելիքներու եւ տեղեկատուութեան պարբերաթերթն է «Կանթեղը», որ կը միտի թարմացնել եւ պօրացնել Հայ հաւատացեալի հոգիին մէջ, Հայաստանեայց Եկեղեցւոյ սրբապան աւանդները եւ հաւատալիքները:

Հայաստանեայց Եկեղեցին եղած է Հայ ժողովուրդի հոգեւոր եւ բարոյական արժէքներու մատակարարը, ջամբած է անոր վեհ սկզբունքներ եւ կազմաւորած անոր մտածելակերպը:

Ներկայ դարուն, ապրելով ալլապան գաղափարներու ժխտին մէջ, հարկ է, որ Հայ անհատը տէրը կանգնի իր ազգային ժառանգութեան, պահէ իր տոհմային դիմագիծը, Եկեղեցին, մշակոյթը եւ պատմութիւնը:

Հակառակ գիտութեան բազմաթիւ յառաջդիմութիւններուն եւ բարիքներուն, նոյն աճումը չէ պագուած հոգեւոր վերաշինութեան մարպին մէջ:

«Կանթեղը» կը ձգտի ներքին վերանորոգման եւ վերակերտումի աշխատանքին:

ԱՆՈՒԾԱԽԱՆ Ծ. ՎՐԴ. ԶՂԶԱՆԵԱՆ
Տեղեկատու Դիւան. Երուսաղեմ